նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ---------- 2023թ. **N -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 736-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի «Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» N 736-Ա որոշման 1-ին կետի «Ֆրանսիայի» բառը փոխարինել «Շառլ Ազնավուրի անվան» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 736-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի «Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» N 736-Ա որոշմամբ տրվել էր համաձայնություն՝ Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում Հայաստանի ազգային հերոս, երգիչ, երգահան, պոետ, դերասան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին ընդառաջ՝ Երևան քաղաքում տեղադրել մեծանուն շանսոնյեի հիշատակը հավերժացնող հուշարձանը:

Երևանի քաղաքապետարանը արձանի ընտրության համար հայտարարել էր բաց մրցույթ, իսկ Երևանի քաղաքապետի 30.08.2023թ. հ. 1323-Ա կարգադրությամբ ստեղծվել էր Շառլ Ազնավուրի հուշարձանի նախագծի ընտրության մրցութային հանձնաժողով, հաստատվել հանձնաժողովի անհատական կազմը:

Ս/թ օգոստոսի 31-ին կայացած հանձնաժողովի նիստում ներկայացվեցին բաց մրցույթին մասնակցած, թվով 37 հայտ, որոնցից որևէ մեկը հավանություն չարժանացավ հանձնաժողովի կողմից: Բացի այդ, հանձնաժողովը, հաշվի առնելով մասնագիտական հանրույթի կարծիքը, միաձայն առաջարկեց իրականացնել նոր մրցույթ, ինչպես նաև դիտարկել հուշարձանը Շառլ Ազնավուրի անունը կրող հրապարակում տեղադրելու հնարավորությունը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում արձանագրվեց նաև, որ Երևանի Ֆրանսիայի հրապարակում Շառլ Ազնավուրի հուշարձանի տեղադրումը մասնագիտական տեսանկյունից խնդրահարույց լինելուց բացի, հնարավորություն չի ընձեռի արվեստագետի ստեղծագործական ժառանգության երկրպագուներին, արվեստասերներին, զբոսաշրջիկներին մոտենալ արձանին, պատշաճ կերպով հարգանքի տուրք մատուցել, ծաղիկներ խոնարհել մեծն շանսոնյեի հիշատակին՝ արձանի տեղադիրքի հասանելի չլինելու պատճառով: Բացի այդ, քննարկումների արդյունքում ներկայացվեց, որ հուշարձանը չի համադրվի տեղանքի ճարտարապետական միջավայրին: Ըստ այդմ՝ առաջարկվեց դիտարկել արձանը Շառլ Ազնավուրի անվան հրապարակում տեղադրելու հնարավորությունը, ինչը բովանդակային-խորհրդանշական և գեղագիտական-ճարտարապետական լուծումների առումով առավել ընդունելի կլինի և կամբողջացնի հրապարակի տեսքը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 736-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 736-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 736-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 736-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**